ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ
հակակոռուպցիոն կենտրոն

10 սեպտեմբերի 2026 թ. ԹԻ 26/54-10

Հարգելի՛ գործընկերներ,

Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնը (ԹԻՀԿ) շարունակում է իր առաքելության շրջանակում Հայաստանում հակակոռուպցիոն կրթության և իրազեկվածության զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացումը:

Ուրախ ենք տեղեկացնել, որ մեկնարկել է ԹԻՀԿ Հակակոռուպցիոն դպրոցի 13-րդ խմբի ընդունելությունը:

Հակակոռուպցիոն դպրոցի նպատակն է մասնակիցներին տրամադրել համապարփակ և կիրառական գիտելիքներ՝ կոռուպցիայի էության, պատճառների և դրսևորումների, կոռուպցիոն ռիսկերի և դրանց ազդեցության, կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի մեխանիզմների, Հայաստանի հակակոռուպցիոն քաղաքականության և ինստիտուցիոնալ համակարգի, միջազգային հակակոռուպցիոն պարտավորությունների, ինչպես նաև բարեվարքության, շահերի բախման և հանրային ծառայությանն առնչվող այլ հիմնահարցերի վերաբերյալ:

Դասընթացի շրջանակում դասախոսություններով և գործնական քննարկումներով հանդես կգան հակակոռուպցիոն ոլորտի առաջատար մասնագետներ և փորձագետներ:

Դպրոցին կարող են դիմել 23 տարին լրացած անձինք: Տարիքային վերին սահմանափակում նախատեսված չէ:

Հատկապես խրախուսվում է **պետական և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցների**, ինչպես նաև կոռուպցիայի կանխարգելման, հակակոռուպցիոն քաղաքականության, բարեվարքության, հանրային կառավարման և հարակից ոլորտներում մասնագիտական գործունեություն իրականացնող անձանց մասնակցությունը:

Ընտրության ընթացքում նախապատվություն կտրվի ոլորտում մասնագիտական փորձ ունեցող, մասնավորապես՝ միջին մասնագիտական և կառավարչական օղակներում (mid-level career) աշխատող մասնագետներին, ովքեր ձեռք բերված գիտելիքներն ու հմտությունները կարող են կիրառել իրենց մասնագիտական գործունեության շրջանակում:

Ուսուցումն իրականացվելու է առկա ձևաչափով, հայերենով և անվճար:

Դասընթացի օրերը՝ հոկտեմբերի 2, 3, 4 և 9, 10, 11
Վայրը՝ Երևան
Տևողությունը՝ 6 օր

Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում աշխատող մասնակիցների համար երկու ուրբաթ օրերին դասընթացին մասնակցությունը հիմնավորելու նպատակով ԹԻՀԿ-ի կողմից կտրամադրվի համապատասխան տեղեկանք:

Հայաստան, Երևան, 0019, Այգեձորի 53
Հեռ.՝ (374 96) 000388, (374 10) 569589, 569689
info@transparency.am ● www.transparency.am

Դասընթացի առնվազն 80%-ին մասնակցություն ցուցաբերած մասնակիցներին կտրամադրվի հավաստագիր:

Հաշվի առնելով պետական և տեղական ինքնակառավարման համակարգում հակակոռուպցիոն կարողությունների շարունակական զարգացման կարևորությունը՝ **խնդրում ենք, հնարավորության դեպքում, սույն հրավերը տարածել Ձեր աշխատակիցների շրջանում** և խրախուսել համապատասխան մասնագետների մասնակցությունը: Ընտրության գործընթացում հենց այս ոլորտներում մասնագիտական գործունեություն իրականացնող դիմորդների ներգրավումը մեզ համար առաջնահերթություն է:

Դիմելու կարգը

Մասնակցության համար անհրաժեշտ է մինչև **սեպտեմբերի 17-ը ներառյալ** լրացնել սույն դիմում-հայտը՝ https://forms.gle/RUtWrs5gLSq18rEt7 : Նախնական փուլը հաղթահարած դիմորդները կհրավիրվեն հարցազրույցի:

Խնդրում ենք նկատի ունենալ, որ անհրաժեշտ է լրացնել դիմում-հայտի բոլոր դաշտերը՝ ըստ սահմանված չափորոշիչների: **Թերի դիմումները չեն դիտարկվի:**

Հարցերի դեպքում կարող եք դիմել **shushan@transparency.am** էլեկտրոնային հասցեով:

Շնորհակալություն համագործակցության և հակակոռուպցիոն կրթության զարգացման գործում Ձեր աջակցության համար:

Ծրագիրն իրականացվում է Շվեդիայի կառավարության աջակցությամբ:

Հարգանքով՝

Սոնա Այվազյան
ԹԻՀԿ գործադիր տնօրեն

Հայաստան, Երևան, 0019, Այգեձորի 53
Հեռ.՝ (374 96) 000388, (374 10) 569589, 569689
info@transparency.am ● www.transparency.am